թուերը, որոնք վերաբերում են Հայաստանի աղգաբնակութեան բնական աճման, մահերի թիւը հանելով ծնունդների թուից.—

	Աճում
1923–ին	19,723 հոգի
1924–ին	25,246 հոգի
1925–ին	27,920 հոգի
1926–ին	31,849 հոգի

Նշանակում է՝ 1923–ից մինչեւ 1926, չորս տարուան ընթացքում, Հայաստանի ժողովուրդը բնական աճումով (հաշուելով ծնունդների եւ մահերի տարբերութիւնը) 104,-738 մարդկային յաւելեալ կեանքեր է արտադրել:

Բնական աճումը եղել է, ըստ տարիների, հետեւեալ տոկոսներով.—

	Ան Հազար
1923–ին	25·2
1924–ին	28
1925–ին	31

Միւս կողմից, 1922–1925 թուականներին Հայաստանի բնակչութեան արուեստական աճումը (ներգաղթի ճանապարհով), եղել է 17,452 չունչ: Պաշտօնական հաղորդագրութիւններն ասում են, որ 1922–ի սկզբից մինչեւ 1925–ի վերջը Հայաստան են մտել 17,452 գաղթական: Աւելացնելով այս վերջինը վերոյիշեալ 104,738–ի վրայ, կը ստանանք ուրեմն 122,190 յաւելում:

Անդրկովկասի Կենտրոնական Վիճակագրական Կոմիտէն թէեւ իր կողմից եւս հաստատել է Հայաստանի բնակչութեան բնական աճման 2·9–3·1 տոկոսը, բայց Հայաստանի պատկան հիմնարկը այնուամենայնիւ, «զգուշութեան համար», որպէս աճման միջին չափ առել է հարիւրին 2·5:

Եւրոպական ժողովուրդների մօտ աճման միջին տոկոսը հայկականի կէսից չէ անցնում: Իսկ միւնոյն տարիներում Վրաստանը ունեցել է հազարին ընդամէնը 9, իսկ Ադրբէջանն էլ հազարին 7 միջին աճեցողութիւն:

Պաշտօնական հաղորդագրութիւնը ասում է, որ Հայաստանի եւ իր հարեւան երկիրների աղգաբնակութեան աճման մէջ եղած տոկոսական այս «անհաւասարի տարբերութիւնը» ըստիպել է՝ Հայաստան դրկել «հողաժնի վարիչ ընկեր Դիվնոգորձեւին», տեղւոյն վրայ վերըստուգումներ կատարելու: Վերջինիս ներկայութեանն էլ այդ հարցը մանրամասն քննութեան է առնուել ոչ միայն ըստ գաւառների, այլ եւ ըստ գաւառակների, ըստ տարիների եւ ըստ աղգութիւնների ու հաստատուել է որ՝ 1· մահուան համեմատութիւնը ինչպէս Եւրոպայի, նոյնպէս եւ Հայաստանի մէջ նախապատերազմեան չափից իջել է, մինչդեռ ծնունդների համեմատութիւնը բարձրացել: 2· Որ Հայաստանի մէջ հարիւրին 95 կատարուած են ծնունդի եւ մահուան արձանագրութիւնները, հետեւարար Հայաստանի բարձր աճման չափը ամէն կասկածից վեր է:

Պարզուել է միեւնոյն ժամանակ, որ վրացիներն ու թուրքերը իրենց աճման չափով շատ յետ են մնում հայերից: Թուրքերի աճման չափը աւելի նուազ լինելուն համոզուելու համար, երկու քննիչներ էլ գնացել են Նախիջեւան, ուր եւ արձանագրութեան տոմարից ստուգումներ կատարելով գտել են, որ այնտեղ եւս թուրքերի եւ հայերի աճման համեմատական չափը նոյնն է, ինչ որ Հայաստանի մէջ:

Պէտք է ասել, որ դեռ պատերազմից առաջ էլ հայ ժողովրդի աճման արտակարգ չափը դրաւել էր շատերի ուշադրութիւնը, նաեւ Ռուսաստանում: Եւրոպացի հետախուզողների աչքից եւս չէ վրիպել այդ երեւոյթը:

Այս վերջինների թուում յիշելու է օրինակ Ֆելիքս Ֆօն Լուշանին, որ Բերլինի համալսարանի ուսուցչապետ էր, հռչակաւոր մարդաբան–աղգագրագէտ. մեռաւ մի քանի տարի առաջ: Նրա ամենածանօթ — կարծեմ՝ վերջին — աշխատութիւնն է «Ժողովուրդներ, ցեղեր եւ լեզուներ» գրուածքը, լոյս տեսած 1922–ին: Այդ աշխատութեան մասին ես ժամանակին հանդամանօրէն գրել եմ «Հայրենիք» օրաթերթում (1923, փետր· 24 եւ 25):

Հեղինակը քաղաքական–պատմական եւ կամ այլ կարգի համակրութիւններ ամենեւին չունի հայ ժողովուրդի հանդէպ: Ընդհակառակը, ակներեւ է նրա թրքասիրութիւնը· «Հայերը միշտ էլ պետական վատ քաղաքացիներ են եղած եւ անհաւատարիմ հպատակներ»,— ահա դիտնական մարդու համբակ կարծիքը հայերի մասին: Նա թէեւ «ցաւալի» է համա-